

ՎԱՂՈՒՄԱՆ ԶԱՅՆԸ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՀԱՐՑԸ

Այսօր երբ վերջապէս դադրած ըլլալ կը թուի մեծ ճգնաժամը ու անհնարին տագնապներէ ետքը՝ երբ կըսկսինք քիչ մը շունչ առնել, Հայ ժողովուրդին առջեւ կը ցցուի իր նոր կեանքին ծանր հարցը. ի՞նչ ընել որպէս զի չկրկնուին այս ահաւոր արիւնհեղութիւնները. ի՞նչ ընել վերափոխ տիրանալու համար մեր կորսնցուցած ուժին. ի՞նչ ընել մանաւանդ՝ քաղաք համար նոր յառաջդիմութիւններու ճամբուն մէջ՝ երբ նոյն իսկ այնքան դժուար է մեզի՝ եթէ ոչ անկարելի՝ ունենալ ընկերական ճշմարիտ անկախութիւն մը:

Առաջին քայլը պէտք է կայանայ ապահովարար՝ կատարելապէս ըմբռնելու խնդրին մեծ կենտրոնութիւնը:

Դուրսէն՝ մեզի նկատմամբ ամբողջ աշխարհիս չարակամութիւնը, մեր քովը՝ իսլամական անհաշակելի մոլեռանդութիւնը, մեր մէջը՝ Հայ կուսակցութիւններու ոճրագործ քաղաքականութիւնը ու մեր աւանդական պարզամտութիւնը բաւական զօրութիւն չարժանիք են չուարեցնելու համար է՛ն խանգավառ բարի կամքերը:

Չարիքը սքանչելի կերպով կազմակերպւած է մեզի դէմ. եւ ո՛չ պոռտոպոս կոչերը, ո՛չ հայրենասիրական բացազանչութիւնները կարող պիտի ըլլան մեզի յոյս տալ: Այլ պէտք է անցնի ան շրջանը ուր մեր ներողամտութիւնը թոյլ տուաւ քանի մը կոյրերու՝ գործել մեր անունով, ապրիլ մեր անունով, եւ որոնց վրայ դրած մեր վայրկեանի մը հաւատքը այսօր մեր արիւննովը կը վարձատրէ մեզի:

Այսօր երջանիկ պիտի սեպէինք ինքզինքնիս եթէ Տաճկաստանը ունենար իր տա-

սը տարի առաջուան վիճակը: Մեր երկիրը՝ անտարակոյս՝ երբէք չէ եղած կատարեալ ազատութիւններու հողը, ու մ. նէ էն լաւատեսներուն պիտի չը պակսէին դժգոհութեան առիթներ: Բայց եւ այնպէս մեր ներկային ու անցեալին համառօտ բաղդատութիւն մը մեզի պիտի պարզէ մեր կորուստին մեծութիւնը: Առաջ՝ Քիւրտ հրոսակներու պատահական յարձակումներ՝ յաճախ պարտութիւնով ետ մղուած ինքզինքնին պաշտպանել գիտցող պիւղոցիներէ, արդարութեան պատահական զեղծումներ, քրիստոնեայի եւ իսլամի ընադդական հակակրօթիւնը միայն իսկ երեք տարիէ ի վեր մանաւանդ՝ անասնձ կիրքերու պոռթկումը, կազմակերպուած եւ կէտ առ կէտ դործադրուած հաւաքական ջարդերը, սովը, անօթութիւնը, տարագրութիւններու անվերջանալի եւ դժբաղդ շարքը, ներքին տրտում երկպառակութիւնները: Մեր մարդասպանները կը մնան անպատիժ ու մեր վրէժը անօգուտ անէժքներով կը գոհացնենք միայն:

Մեր ընկերական բարօրութիւնը՝ անհասական իմաստութեան գործ մը պիտի ըլլայ մանաւանդ: Ամէն անհատի կը մնայ բռնել հանդարտութեան ընթացք մը, զգուշանալ իր կողմէն գրգռել օտարին կիրքը, հեռու պահել ինքզինքը վտանգաւոր դրացնութիւններէ, իր զբաղումներովը պարապել միայն հպարտութիւնով եւ արժանապատւութիւնով: Ասիկա միակ ուղղութիւնն է զոր կրնանք բռնել, ու ո՛չ շողքորթներ եւ ոչ ալ ստորնացողներ պիտի ըլլանք այսպէսով: Որքան ալ ցաւազին որ ըլլայ հաշտութիւն ձեւացնել մեր դահիճներուն հետ՝ ստիպուած ենք անոր: Այն ատեն պիտի դադրին բոլոր հալածանքները ու մեր գլխուն սպառնացող բոլոր վտանգները: Ուրիշ բանի չի փափաքիր մեր թշնամին: Նենգամիտ եւ խորամանկ պալատականները գիտէն թէ

մեր մահը իրենցն ալ կը պատրաստէ: Եթէ կողքեն վերջնականապէս գոցել բարբարոսութիւններու թուականը, անկարող մերժումներով չը պատասխանենք իրենց բողոքներին:

* * *

Ընկերական խաղաղութիւնը էական ու անհրաժեշտ սատարն է ամէն յառաջդիմութեան: Երբոր խոհեմ եւ իմաստուն ընթացքով հեռացնենք ամէն խոչընդոտ եւ ամէն գէշ տըրամադրութիւն, Հայ ժողովուրդին պիտի մնայ իրականացնել իր բարոյական զարգացումին գործը: Պէտք է որ գէպերու մեծ դասը նշանակութիւն մը ունենայ մեզի ու շարժինք՝ մեր թերութիւններուն եւ մեր ուժին զիտակցութիւնովը:

Մեր միասնութիւնը, մեր անինքնագէտ ձգտումները եւ յախուռն ինքնահաւանութիւնը, շատ մը գեղեցիկ արժանիքներու քով, միշտ յատկանշական մասը կազմած են մեր ցեղային նկարագրին: Անոնց է որ կը պարտինք 95ին եւ 96ին ողբերգական ցոյցերը, անոնց է որ կը պարտինք մեր քաղաքական անցեալ անկախութիւններու յաջորդական մահերը: Մեր ամբողջ պատմութեան մէջ միեւնոյն հոգին հաստատուած է: Մեր հասարակական կեանքը, պարփակուած ուսման մտահոգութիւններու մէջ, չէ կրցած ստեղծել օգտակար յեղաշրջութիւններու տարրերը: Կարճատեւ՝ եւ զուրկ բարձր գոհացումներու ծարաւէն՝ մեր հետաքրքրութիւնը մեր անմիջական պէտքերէն եւ մեր եկեղեցիէն անդին չենք անցուցած:

Բոլոր այս արատները իրենց պատճառները ունին. միջավայրի դժուար պայմանները՝ անտարակոյս. բայց մանաւանդ չենք ունեցած ժողովուրդի ճշմարիտ դաստիարակներ: Եթէ այսքան թեթեւամիտ ենք եւ այսքան տրամադիր ապականութիւններու, անոր համար է որ հիմնական եւ լուրջ կրթութիւնը պակասած է մեզի: Եթէ դեռ անկարող եղած ենք արդիւնաւոր ճիգերու ու դեռ չունինք տոհմային ուրոյն նկարագիր մը, անոր համար է որ մեր առաջնորդները՝ ըլլան քաղաքագէտ, ըլլան գրագէտ, ըլլան դասատու՝ ողբալի կերպով զրկուած են էջմարիտ արժանիքէ. որովհետեւ անոնք չեն աշխատած, չեն պատրաստուած լուրջ եւ խղճամիտ կեանքերով չեն

կրցած հասնիլ ընդհանուր գաղափարի մը, կեանքի իմաստասիրուած ըմբռնումի մը:

Քանի մը բացառիկ գէմքերէ զտո՝ ազնուական եւ խոհուն մարդիկ՝ որոնց կեանքը խտէլով մը վառուած է եւ որոնց գործը անդադար չանք մը եղած է գէպի բարձր նպատակներ, մեր ամբողջ գրականութիւնը կը կրէ մտաւորական այս ահռելի պարապին գրոջմը:

Սկիզբները Աստուծոյ եւ պատերազմներու փառքը երգած ենք միայն, եւ կամ բարոյականութեան քարոզներ կարդացած: Անշուշտ պիտի պարծենանք մեր միատիքական բանաստեղծութիւնովը, բայց անոր լոկ իսկական իմաստը հասկցողներուն համար կոյր մոլեռանդութեան կը նպաստէ ան: Պատկառելի եկեղեցականներ եւ խանդավառ հայրենասէրներ միշտ շոյած են երկու մեծ զգացումներ. կրօնքը եւ հայրենիքը՝ առանց սակայն կարենալ ստեղծելու անոնց զիտակից հասկացողութիւնը:

Ժամանակակից օրերուն մէջ որ մեր գըրական գործունէութեան էն առատ շրջանն է ապահովաբար, ամէն գրիչ բռնող գրագէտ ըլլալով, իմաստակութիւնը կը խեղդէ մեզի: Այսօր լուսնկայի, վարդի, վերջալոյսի, սիրային տափակութիւններու եւ սրտի այլեւայլ բախումներու դպրոցը շինած ենք Տասը գրքի ընթերցումով՝ բոլոր իմաստասիրութիւնները ըմբռնած: Պակասնէ՛ր զորս պէտք է քանդել, յատկութիւննէ՛ր զորս պէտք է ստեղծել:

Ինքնամիտի եւ յարատեւ աշխատութիւնով, մտածումի անաղմուկ կեանքերով է որ պիտի գտնենք մեր փրկութիւնը: Դադա՛ր անձնական վէճերու, կուսակցական պայքարներու, պզտիկ եւ ողորմելի նկատումներու:

Լուութեան մէջ պիտի պատրաստուի մեր ապագայի բարօրութիւնը: Ինչ դասակարգի սր ալ պատկանինք եւ ինչ որ ըլլայ մեր զարգացումին չափը, ամենուս վրայ կը ծանրանայ պարտք մը զոր պէտք է հատուցանենք անձուիրօրէն:

Արուեստագէտը իր արուեստով, գիտունը իր գիտութիւնով, ուսանողը իր ուսումներով, իւրաքանչիւրը իրենց ճիւղին մէջ, իւրաքանչիւրը ձգտելով անհատական ազնիւ խտալի մը, պիտի շինեն հաւաքական մեծ Արժանիքը ուսկից կը զրկուինք:

Մեր զօրաւոր համերաշխութեան առջեւ

պիտի նուազին մեր ինքնակոչ եւ ապական-
ւած խումբերը: Մենք պէտք չունինք անոնց
եւ կուրանանք զանոնք: Ճշմարիտ կուսակցու-
թիւնը որ միայն իրաւունք ունի գոյութեան՝
աշխատող եւ անկախ Հայ երտասարդութեան
պէտք է պատկանի: Անոնցը որոնք ինքնա-
զարգացումի նուիրուած երկայն տարիներու
վաստակովը, արժանի պիտի ըլլան ուղղելու
իրենց ճակատագիրը:

Աշխատութեան լուռ կեանքեր: Անոնցմով
միայն մեր տեղը պիտի ունենանք մարդու-
թեան ոսկեղէն գրքին մէջ: «Ազնուական մար-
դիկը, կը գրէ Գարլալ սքանչելի կերպով, ո-
րոնք կը խորհին լուռութեան մէջ, կը գործեն
լուռութեան մէջ եւ որոնց վրայ ո՛չ ոք կը խօ-
սի, երկրիս ազն են անոնք: Ազգ մը որ ա-
նոնցմէ չունի գէշ ճամբու մէջ է: Ինչպէս ուժով
արմատներէ զրկուած անտառ մը պիտի հար-
կաւորապէս չորնայ քիչ ատենէն, նոյնպէս վայ
մեղի եթէ մեր ցուցուցածները ունինք միայն:
Լուռութիւնը. անիկա միայն մեծ է, ուրիշ ա-
մէն բան պղտիկ.»:

* * *

Պիտի ուզէի որ անկեղծ եւ եղբայրական
խօսքեր ցուցնէին իմ սերունդիս երտասարդու-
թեանը իր կոչումին բարձր գեղեցկութիւնը:

Անտարակոյս՝ տարաբաղդներ եղանք
մենք ապրելով սուգի այս շրջանին մէջ: Մեր
երկրին հոգեվարքին շուրջը տեսանք զօրաւոր-
ներու ցածութիւնը, ժողովուրդներու անտար-
բերութիւնը, գեղեցիկ զգացումներու սնանկը:
Ամէն հարստահարուածէ աւելի ցաւազին կեր-
պով, մենք ճանչցանք ահակելի պատրանքը ար-
դարութեան հաւատքին, զգացինք անկարողու-
թիւնը մեր սէրերուն եւ մեր ատելութիւն-
ներուն: Բայց հակառակ բոլոր ասոնց, կըսեմ
թէ իրաւունք ունինք մեզի երջանիկ նկատե-
լու, որովհետեւ մեզի սահմանուած է կատարել
էն ազնիւ եւ միսիթարող գործը, անձնուիրու-
թեան գործը՝ ազգի մը վերակենդանացումին
համար:

Կը լսեմ մարդիկ որ կըսեն ինձի. «Այս-
քան չարաշուք ազէպքներէ վերջը, մեր ամեն-
քէն լքումին եւ յուսահատութեանը մէջ, ի՞նչ-
պէս փրկութեան յուսալ.»: Սխա՛լ խօսք որ
"բոլոր չորութիւն միայն կենթադրէ:

Պարտութիւնները յաճախ կուենան
սքանչելի հակազեցութիւններ, ու հաւաքա-
կան մեծ ցաւերէ ետքը՝ նոր կեանքեր կը
փթթին, աւելի թարմ: Որքան որ արիւնոտ
ըլլան բարբարոս յաղթանակները, երբէք պի-
տի չկրնան ջնջել իաէալի մը ձգտելու իղձը,
սկարացնել անհատական կամքերը:

Մէկէ աւելի անգամներ գոյութիւն ու-
նեցած են մեզի համար ժամանակակից այս օ-
րերը, ու միշտ, իր վազանցուկ թմրութենէն
ետքը, Հայ ժողովուրդը վեր բարձրացուցած
է իր գլուխը, վերստին տէր եղած իր ամ-
բողջ կորովին:

Գիտեմ թէ մեր այս օրուան ստուա-
պանքները էն խորունկները եղան, բայց միշտ
մեր պատմութեան մէկ յաւիտենական ե-
րեսն է որ կը ներկայանայ մեզի: Միս մի-
նակ ենք նորէն ու մեր ճակատագիրը մեր
ձեռքն է միայն:

Անոնց որ կզգան իրենց պարտականու-
թիւնը, ի՛նչ գեղեցիկ առիթ ապրելու համար
հպարտութեան կեանք մը՝ նուիրուած բարձր
նպատակներու իրականացումին: Ճակատագի-
րը մեր առջեւը կը դնէ սքանչելի պայման
մը որով մեր գոյութիւնները իմաստ մը կըր-
նան ունենալ:

Եսասիրական ձգտումներէ վեր՝ հաւատա-
քի եւ խանգաղառութեան շրջան մը կը
փորձէ մեզի: Ողջունե՛նք զայն:

ԼԵՒՈՆ ԱՐՄԷՆԵՍՆ

* * * ՄՇԱԿի հոկտեմբեր 7ի թիւին մէջ, Մ.
Յովհաննէսեան անուն ռուսահայ տիրացու մը վեր
գլխուն «հոսիտոս»ներու տարախ մը տեղացեցի վերջ,
մեր Ա. թիւին մէջ երեւցած՝ Լ. Արսէնեանի «Մե-
ծուքիս եւ Անկում»ը հաւատարմաբար ե ֆենտաստիք.^o
Անշուշտ չեիմք կրնար միտատարիւր ունենալ կար-
ծեցու քե ռուսահայ գրուի մը երբեք կարող ըլլար
տոյն իսկ բառ մը հասկնար մեր տաղանդաւոր
աշխատակցիս այդ գեղեցիկ եջեհ. ու մեր Կովկասի
հայրենակիցներուն խնայակալութեան վրայ ունե-
ցած մեր այս տար ու անդրադարձի հաւաստի ե որ
սխալեց մեզի պարզ յիշատակութեանը անցնիլ տար
վրայիս, — որովհետեւ մեր կողմէն բարձր պատաս-
խան մը, — երբ տար հասնիմք սոյ — նորեւ հաս-
կցուերու բարդը չպիտի ունենար գոնէ: — (Մ. Խ.)

ՔԱՅՈՋ ՄԵ

Անոնց հաւար եւ այս քանի մը հանդի-
սաւոր խօսքերը — որոնց անխուսափելի ծիծաղե-
լին չը կաշխանդեր մեզի, — այն անձաւոր պարուն-
ներուն հաւար, որոնք սեզ՝ իրենց արհաւարհան-
քին մեզ, ասեակ մը խօսք, անեղի կը գտնուի ու
կը հոշակեն ամեն գրականութիւն «ազգին շխուր
վիճակին մեջ»:

Նախ չեմք զիստ քե մեր այդ անողորմ
հայրենակիցները ի՞նչպէս կը բացատրեն իրենց
բացարձակ հակառակութիւնը մեր մեջ ու եւ ի գը-
րական գործունեութեան դեմ, չեմք զիստ ճոյն
խկ քե ի՞նչ կը հասկնան գրականութիւն ըսելով,
Անահիտի «աշխատն՝ ածող» — օհ, ո՛րչափ աշխատ-
ւած — քե Հանդէս Ամսօրեայի . . . նախասկ-
ւածը: Բայց իրենց պահանջը այնքան անխնայ
կը բռնի մեզի, որքան անհեթեթ պիտի ըլլար ըսել
մեր վաճառականներուն կամ մեր գործաւոր եղ-
բայրներուն՝ դադրեցնել իրենց գործը . . . «ազգին
ժխուր վիճակին մեջ»:

* * *

Անոնցմէ ոմանք — քիչ շատ զարգացած-
ները — գրականութիւնը պերճանք մը նկատել կը
բռնին, կարմիր պոռոտ ժապաւեն մը մեր սուգի
սեւ վերարկուն վրայ: Ուրիշներ — դաժանօրէն
սէ՛րբլիւր — վնասակար կը գտնեն զայն ու միև-
ջեւ իսկ սկզբնապատճառը կը յառակին զայն
գտնել մեզ ընկնող բոլոր ջարհներուն:

— Գրականութիւնը ի՞նչ է, քերք հանելը
ի՞նչ է . . . ասիկա եղաւ ջարդերուն պատճառը: . . .

Երանելի՛ զաւագարներ որոնց հաւար ամեն
քերք գրականութիւն է, ամեն քերք հանող՝ գրա-
գիտ եւ որոնց հայրենասիրական սրանաբանու-
թիւնը զինաբախ պիտի ընէր սակայն մեկե է՛ն
երկայնակիները:

* * *

Մեմք որ կուզեմք ամեն ինասականութիւն-
ներէ ու դիւրին շնորհաշիտութիւններէ կոյս՝ ուժով
ու կենսաշի գրականութիւն մը գոր միայն կը
հաւաստեմք հօրուզոյն ազգակը, ազնուական ճիգը
մեր ազգային բարոյական ազատագրման գործին,
մեմք որ, ասոր հաւար, յօժարակամ կը հրաժա-
րինք գրտ գեղեցկագիտական մտանդութիւններէ,
քեւ չըլլայինք հեթանոսներ գեղեցկին կրօնին,

մեմք որ հակայ ու միշտ պատրաստ քրիչ մը ու-
նիկի բոլոր անոնց քրիւն որ «գեղարուեստ» բառը
արտասանեն մեզի, յազարակ գոցելով այժերեկին, մեմք
կարծեմք իրաւունք ունիմք քիչ մը գրականութեան հա-
ւար մեր սգաւոր ու երջանիկ հայրենակիցներուն
ցուցուած անսարքերութեան առջեւ արժեքը:

* * *

Բայց ի՞նչ կուզեն անոնք: Մեծ Սիւսիէն
վերջը գոր ազգովին գործեցիմք — քաջութիւնը ու-
նենանք ասիկա ըսելու, քանի որ բուն յանցա-
ւորները դեռ չուզեցին խոստովանիլ — ի՞նչ ընենք,
նախնք քո՞նք:

Չէ՛, ասիկա քիչ մը ժխուր ու շատ ծիծա-
ղելի պիտի ըլլար: Կար ինչու քան մեր է եր-
բունք, բայց մանաւանդ վիստեցնող ու ամուր:
Մեմք ալ մեր արցունքի պատճառը յայտնեմք
վաճառեցիմք ու չեղաւ հայ սիրտ մը, կը հաւա-
սանք, որ յարիւնք մեծ կորուստին վաղորդայնը:

Հիւստ ժաւանակ է որ — ու հոս է որ
քարոզը կը սկսի — արքեմք այժերեկիս եւ. երբ
հարկ է, կրկին ակնոցներով զինեմք զանոնք ա՛յ
պայծառ տեսաբան հաւար մեր շուրջը:

Ժաւանակ է մանաւանդ որ ջանանք քիչ
մը մոռնալ սեւ, արիւնտ ակնոցաբ, դեռ շատ մօտ
մեզի, բայց որուն յիշատակը այնքան ջրասող
ըլլալ կը սպառնայ ազգային կրօնին:

Թող մեր սժգոյն հերոսներն ալ ինչպէն
մեզի իրենց անմարտելի սրանաբանութիւնը ու նե-
ղացուցիչ մեկնութիւններն տեղ — քանդուի ու
մանուան հրաշակերտին վրայ որով անմահացուցին
ինքզինքնին — բող խոստովանին վերջապէս ու
ժողովուրդը պիտի ներէ անոնցմէ անկեղծներն:

* * *

Անա՛ վաղուան գործը:
Թող հայ վաճառականը — քեւ ասոր հա-
ւար ան քարոզի պէտք չունի — կրկնապատիկ իր
գործունեութիւնը հասնելու հաւար իր առջի գե-
րակշիռ դիրքին:

Թող հայ գիւղացին — օ՛հ, է՛ն կսկծային
անեմքնու — նոր յոյսով ուժովցած՝ արք զառ-
նայ ու երբ արօրին ծայրը դեռ քարն զանկեր
նեմք արիւնով պարարացած հողերէն դուրս՝ բող
չը վրդովուի քանի յոգնած իր սիրտը, բող ծոխ
փոսք նեմք նորէն զանոնք ու եկող զարնան բող
կսկանց յորէն բունին այդ դժնէ ոսկորները:

Թող հայ տերերը առջի վեհախառ հաս-
նիսաւորութեանը սարածե իր բարոյակները ծնու-
ղիւր հասարակեցեալներուն վրայ, բող իր ձայնը ա-
ռեղի ձխիքսարող ըլլայ, իր շարժումները՝ հոշակապ:

Թող հայ վարժապետը գիտակցութիւնը ու-
նենայ իր բարձր կոչումին ու խղճմանը հա-
խարհ իր պարտքը:

Ու միտենայն ասեմ բող հայ մտածողը շա-
րունակի իր բեղունաւոր խոխունքը:

Թող հայ գրագէտը ուժով ու սրտակերպ
խօսքը ընկ հասարակութեան:

Եւ բող հայ բանաստեղծը աղուր, մտոցնող
խօսքեր ընկ մեզի ու իր հ'ն անուշ, հ'ն մեղծ
երգերովը բող գայ գիւնովցներ, բերեցներ, քնա-
ցրներ մեր ծարր...:

Սակեմ:

ՍՈՒՐԷՆ՝ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԻՍԿԱՏԻՊ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՍԸ

Հանդիս Աստուծայի տխուր խմբագիր-
ները գիտենք որ անտագոնիստ խղճամտու-
թեամբ մը կը յարգեն իրենց թերթին բոլոր
աւանդութիւնները: Այս թանկագին աւան-
դութիւններուն ամենէն մեծն է, — աւան-
դութիւն մը որուն ոչ մէկ անգամ անհաւա-
տարիմ գտնուելու երջանկութիւնը չեն ունե-
ցած — պահել թերթը ոճի ու մաքր աջն յու-
սահատեցողիչ անհամութեան ու պառաւու-
թեան մէջ, որով կրցած են ապահովել ըն-
թերցող հասարակութեան մը բացակայութիւնը:

Կրնամ դժբաղդ ըլլալ իմ հանդիպում-
ներուս մէջ, բայց իրողութիւն մըն է որ կը
նշանակեմ, — երբէք չեմ տեսած, ո եւ է տուն
մը, ո եւ է սեղանի մը վրայ, Հանդիս Աստուծայ
մը որուն էջերը կտրուած ըլլան, որ քիչ մը
կարգացուած, թղթատուած, քիչ մը աշխար-
հականացած ըլլայ: Չէ՛, դեռ չէ եկած այն
հիմնալի ընթերցողը որ այդ թերթին վրայ
նայելու, այդ թերթը կարգաւոր գիւցազնա-
կան համբերութիւնը ու գերմարդկային բա-
րութիւնը պիտի ունենար:

Տարօրինակ մտքի վիճակ մը՝ այդ մար-
դերուն մտքի վիճակը: Պառաւներ՝ պիտի ը-

սէի՝ տգեղ պառաւներ որ իրենց մէջ ո եւ է
ձեւի մը տակ գեղեցկութիւն չգտնելուն, յա-
մառած են վայն չը տեսնել իրենցմէ դուրս ալ,
ու այսպէս հասած են բացարձակ գեղեցկագի-
տական անգիտակցութեան մը, որուն շնորհիւ
կրնան լիբբ միամտութեամբ մը անճոռնի ըլ-
լալ, երբ մտաւորական գեղեցիկ գործ մը ի-
րենց առջեւ կելլէ:

Բնականաբար ասիկա չկրնար վիս նե-
ղացնել, ընդհակառակը շատ խորունկ ու շատ
անկեղծ արգահատանք մը ունիմ այս դատա-
պարտուած ու թեւատ իմացականութիւննե-
րուն համար: Բանասիրական մտահոգութիւն-
ներէ՛ դուրս գալերնուն պէս, ծիծաղելի ու
տխուր պառաւներ են միայն, պղտիկ, պարապ
ժպիտներով, պարապ աչքերով, գլխու միօրի-
նակ ու մեքենական շարժումներով, քանի մը
յաւիտենական բառերով իրենց շրթունքներուն
վրայ, առանց որոնց չպիտի կրնային ապրել:
Չորցած ուղեղներ, ու անշարժացած հոգիներ,
որոնք երբէք խանդավառումը, բարեբար ու
արգաւանդ խանդավառումը չեն ճանչցած, ու
չեն սարսուռացած խորունկ յուզումովը մտաւո-
րական գեղեցկութեան իրականացումի մը առ-
ջեւ: Կիսատ էակներ են, կտորտած, ճգմուած,
բթացած զգայնութիւններ, — ու ամէն խնդրի
մէջ, ըլլայ գրական, ըլլայ քաղաքական, ըլ-
լայ ընկերային, հզօրապէս երեւան կուգայ ի-
րենց ամբողջ ծթոած, ամուլ մտաւորականու-
թիւնը: Այնչափ հոյակապ գրողներէ, հրա-
պարակագիրներէ, պատկառելի խորհողներէ,
գիտուններէ, ու համալսարանական հեղի-
նակութիւններէ կտքը որ Տրէյքիւսի
խնդրին մէջ ճշմարտութեան եւ Արդարութեան
դատը պաշտպանեցին, Վիէննայի աբբա մը ըլ-
լալու է կարենալու համար, քանի մը տժգոյն
նախագատութիւններով, խօսիլ Սենտիսի մը
վրայ որ գոյութիւն չունի:

Կրմունէք որ այս խոշոր ու տգեղ տը-
ղեկները — որովհետեւ տարբերութիւնը քիչ է
պառաւներու եւ տգեղ տղաքներու միջեւ —
կեանքերնուն մէջ ո՛չ մէկ օր, ո՛չ իսկ պա-
տահամար, ոչ իսկ ակամայ, չեն կրցած սրամիտ
ըլլալ: Անոր համար է որ իրենց տափակու-
թիւնը շատ անկեղծ, շատ հզօր, ու շատ յու-
սահատական եղած է: Ոչ միայն սրամիտ չեն
կրցած ըլլալ, այլ սրամտութիւնը ըմբռնելու

միջակութեան անգամ չեն կրցած բարձրանալ: Ասոր նոր ապացոյց մըն ալ՝ իրենց տարօրինակ գնահատումը մեր թերթին:

Հանդիս Անսօրեսայի, առ ի չգոյէ ուրիշ ուրիշ բառի, իսկապիտէ կըսէ մեր թերթին վրայ խօսելով.

«Իսկ անո՞ւնն . . . մի զարմանաք, — անունն է «Վարդաւան Զայնը»: Եթէ ճանչցանք ահա նպատակը՝ անունէն իսկ կարելի է խմանալ անոր բռնելու ուղղութիւնը, այսինքն արեւելեան բանաստեղծութեամբ խառն՝ (°.) երգիծաբանական, կատակերգական ու զուեշտական ուղղութիւն մը»:

Ու մտածե՛լ որ խեղճ աբբաները ամբողջ կեանքերնին կը մաշեցունեն այդ լղբուկ հայերէնը արտադրելու համար զոր մեր գրաշարը իսկ չպիտի ուղէր ստորագրած ըլլալ: Մտածե՛լ որ այս մարդերուն համար Վարդաւան Զայնը կը նշանակէ եղբր «արեւելեան բանաստեղծութեամբ խառն՝ (կը կարծեն կոր որ շարգին՝եր պիտի հրատարակենք արդեօք) երգիծաբանական, կատակերգական ու զուեշտական ուղղութիւն մը»: Մտածել որ այս երեք ածականները կրնան կոր քովէ քով գնել ու քովն ալ «արեւելեան բանաստեղծութեամբ խառն ուղղութիւն» հրէջօրէն անխմաստ բացատրութիւնը: — Անճոռնիութեան այս վսեմին առջև ստիպուած եմ համոզուելու որ կրօնքը տարօրինակ միսթարութիւններ, տարօրինակ երջանիկ անգիտակցութիւններ պարզեւելու է իրենց . . . :

ՀԱՅԼՕԻ

ՀԱՐԻՄԻ ԱՆԿԻՒՆ

Ս.Իւ

Նոճիներու շուռ, սրբացիկ, սրգաւոր, կորհրդալից սեւ շարֆի վրայ բացուածֆէն կը սեւեռէ կանանց վսեղակն՝ անտոյր հիսուս նայուածք վր՝ հարեւի աշխարհին:

Պատահանի շրջանակին անկիւնով, Թաղաւերու շարֆի վ՝ սոցեւ ծաղկազարդ, Ուր կերպք շահարակի փունջ վր գիւնով, Աղւոր կրկնիկն ընկողնաներ է հրպարս:

Զիւնէ ձեռքը, մասի ծայրերն արիւնոս, Իրադիկներուն հետ խօշ խաղ վր կը սսած, Մինչ գրուիք, կորուքեալք վր վարանո՛ս՝ Աջ բազուկին վրայ ինկած՝ կերպքի:

Հովի շրնչիկն ալ մագերուն հետ զսկզուր՝ կը կասակէ նագակներով հեշտագին, Ու կը փորձէ անգաղսնապսն մի հաւքոյր Էնթարիին նրունկաւոր շնչակին:

Շրթունքներուն քաշոս, փայլուն ու սսւնկ, Յորդ կարմիրէն՝ կը վրխայ նորք մի սիկար, Ու սրտուն մուխը, — ժակեակ խոսսայտուկ, Դուրս կը ցուի նագոս հեւքով վր սրկար:

Մոխն արծաթէ՝ որ կը բոյի շրթներէն, կրկնարկաբիւն ըլլալ հոգուն կը բուի, Ու, ծրիակնով կը բուրվառէ սարփօրէն՝ Պաշած քիւսիս՝ յիշողութեան ետեւի:

Ու հանրելին գիւնով նայուածֆն անըսարտ, Վրսանգաւոր բաղձակֆի վր փորձակֆէն, կը մոքորի՝ դէպի ներսը ցակարկաւ Թարթիչներուն ծոյ, կիսախառնի եզերֆէն:

ՇԱՀԷՆ

ԱՆՉԿՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ

Գիշերը մութ է, մութ հոգիիս պէս, Դուրս յոգնած անձրեւ վր կ՝ ոգեւարի, Տրտում հովերուն մեջ փետրվարի Կուրսն սրգաւոր հոգիներ անեսու, Գիշերը մութ է, մութ հոգիիս պէս:

Հեռուէն անձկութեան ձայն վր անընդհատ Ինծի կը հասնի, ձայն վր գիշերուան, Թերեւս սրգալակ մըն է օգնութեան Մութիւն, սեւ Դուրսին գոնի վր վրնաս, Հեռուէն անձկութեան ձայն վր անընդհատ:

. . . Պատին վրայ ստուերս խնդայ ետեւս, Սեւ ու սրբակրակ խնդումով վ՝ հսկայ, Խոյ մեկտրիւն վր շուրջս կը հեւայ, Ու երբ՝ վաս՝ վսիսէս կը գոցեմ այքերս Օ՛հ, ստուերս անգութ խնդայ ետեւս . . . :

ՍԱՎԻԹՐԻ

ԵՐԵՎԱՆԵՆԵՐԸ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Du vide, avec du vide autour.

Ernest La Jeunesse.

Գրական համբաւներ կան որոնք պարագաներու նախասնամական աջակցութեամբ մը, անասանման ժողովրդականութեան ու փառքի համեմատութիւններ կանոնեն, ու մէկէ աւելի անգամներ ահեղ ու երջանիկ Միջակութիւնը ցցուեծաւ՝ հիացումէ հեւացող ամբողջներու ծնրադրութեանը առջեւ: Բայց ո՛չ մէկ ժամանակ, ո՛չ մէկ երկրի մէջ Իմաստակութիւնը՝ նոյն իսկ հանձարեղ՝ — որովհետեւ գրեթէ անկարելի է իմաստակ ըլլալ, առանց կտոր մը տաղանդի — չկրցաւ երբէք ճանչնալ հեշտալի սարսուռը ծափահարութիւններուն կամ գոնէ նիւար գոհացումը հաճոյակատար հաւանութեան մը. ընդհակառակը միշտ, անխուսաբելիօրէն կոխկոտուեցաւ ընդհանուրին անտարբերութեան ու ընտրուած ու անկախ մտքերու մեռցնող արհամարհանքին տակ:

Եւ սակայն, մեր մէջ — ապշեցնող, սահմակող բացառութիւն — Ա. Զօպանեան կըրցաւ՝ հրաշքներու հրաշքը՝ Իմաստակութեան միակ ու եզակի յաղթանակին հրաշքը գործել, եւ ասիկա լայնօրէն, անասանմանօրէն կը բուէ որ իր անունը փառքի լուսապսակովը յաւերժանայ . . . :

Քիչեր — ոչ զուրկ, խեղճե՛րը, ճշմարիտ արժանիքէ — կրցած են այնչափ ազմուկ հանել, մեր վերջին տարիներու գրական գործունէութեան մէջ — իրական արժանիքով ու կարողութեամբ, կը կրկնեմ — որչափ «Թուղթի Փառք»ի աւելնոտ հեղինակը — Ոչինչով:

Դպրոցին նստարաններէն սկսաւ ան ողորել Պօլսոյ գրական հրապարակը իր արձակին ու ոտանաւորներուն տեղատարափովը: Ու ասիկա անօրինակ բան մը եղաւ, մինչեւ այն ատեն անձանօթ երեւոյթ մը:

Դեռ տարի մը չէր անցած երբ արդէն չէր մնար Պօլսոյ երկնքին վրայ աստղ մը, վերջապէս երանգ մը, կամուրջին վրայ՝ մու-

րացկան մը, փողոցներուն մէջ չորքոտանի սիրահար մը, Գնալը՝ կով մը, ծովափը՝ աւազի հասիկ մը կամ լքուած իւզոտ գլխարկ մը, աղուոր մազերու մէջ պահուրտող ոջիլ մը, կուսական առաւել կամ նուազ ճերմակ լանջք մը, սրտի ո եւ է գուշակուած բարխում մը — որ բիւրեղացած, հեղուկցած մանաւանդ չըլլար իր մէկ սողուն կամ յանգուոր տափակութեամբը:

* *

Բայց քերթող մը չեղաւ միայն Ա. Զօպանեան: Եթէ ատով բաւականացած ըլլար, հիմայ շատոնց իր անունը թաղուած պիտի ըլլար քաւիչ ու արգահատեցնող մոռացումին մէջ, ու մենք պիտի վեհանձնօրէն խնայէինք իրեն՝ ընկճող դառնութիւնը իր ոչնչութեան հաստատումին: Որովհետեւ — ըսած ըլլանք աս — ռամիկ ու անհեթեթ փառքերը մեզ անհանգիստ չեն ըներ, ու այն ատեն միայն անդիմադրելի է մեզի՝ հաճոյքը աւանդակէպի մը քանդումին՝ երբ ասոր մէջ կը տեսնենք օգուտ մը ընդհանրութեան:

Արդ — ու ասիկա մեր անդրդուելի համոզումն է — ո՛չ մէկ գրող կրցած է այնքան վնասակար ըլլալ մեր սերունդին մտաւոր կազմութեան, որչափ Ա. Զօպանեան:

Անիկա վնասակար եղաւ նախ իր արտադրութեան տարապայման ու համայնածախ բեղմնաւորութեամբը: Թերեւս արժանիք մը ըլլայ աս բոլոր անոնց համար — ու կը վերստան անոնք մեր մէջ — որ որակէն աւելի քանակը կը փնտռեն, բայց ասով էր միայն որ Ա. Զօպանեան կրցաւ հարկադրել իր սխալ ու խափանիչ գրականութիւնը, ու հասնիլ ոչ միայն չէզոքացնելու Բաշալեաններու, Զօհրապներու Խըռօ-Հրանդներու գրական բարերար ազդեցութիւնը, այլ նոյն իսկ, պահ մը, ամուլութեան կրցաւ գատապարտել այդ ազնիւ ցեղէ գրագէտի խառնուածքները որոնք, այդ ըռեհիկ առատութեան միշտ բարձրացող հոսանքէն վերաւորուած, զգուանքի ու անկարողութեան չըջան մը ունեցան:

Անիկա վնասակար եղաւ մանաւանդ այն գեղեցկագիտական կեղծ ու խախուտ ձգառմաներովը զորս բերաւ իր արձակին ու ոտանաւորներուն մէջ, իր ձեւովը որուն խաբեբայ

փողովոգու մը շատերը շլացուց, քննադատական մտահոգութիւններու այդ բացարձակ բացակայութեան օրերուն: Կարծեցին արուեստագէտ մը տեսնել բառերու այդ ուսմիկ ժօնկիտին մէջ, ու իր արձակը մանաւանդ, զուրկ ամէն իսկատպութենէ, բառերու անխնայ եւ անճոռնի կուտակումներով — եւ ուր գրեթէ անկարելի է ջղուտ ու ներդաշնակ ֆուզի մը հանդիպել — իր ուռուցիկ ու պերճական արձակը յաջողեցաւ վերջնականապէս թունաւորել ու կեղծել գրական թարմ ու խոստացող կամէութիւններ: Եւ դեռ այսօր երտասարդ պուէաներու լէգէտն մը կայ Պօլիս որ վերջալոյսին առջեւ կամ լուսնկային նայելով կը հառաչէ Ա. Չօպանեանի անհամար գրական վիժուկներէն ծիծաղելի ու անխնայ տող մը յիշելով:

* *

Իմաստակութեան ու գրական փիւռխորտի անմոռանալի, մղձաւանջային յիշատակարան մը եղաւ Ա. Չօպանեանի Ծաղիկն ալ ուր է՛ն սեւ բանագողութիւնը, է՛ն վարնոց սղիտութեան հետ զուգաւորուեցաւ ու ստեղծեց — հրէշային պտուղ ազգապիղծ երկունքի — գրականութիւն մը որ Կեղծիքին աստուածացումը եղաւ եւ որ սակայն չը կրցաւ քօղարկել իր մտքին ու սրտին անչափելի պարպը: Որովհետեւ Ա. Չօպանեան — այդ մտաւորականը, այդ սեռականը, ինչպէս պիտի ուզէր հիմայ միամտօրէն որ որակէինք զինքը — ո՛չ միայն անկարող էր յետին մտածումին, այլ երբէ՛ք չունեցաւ բաղդը — հասարակ մահկանացուներու շոյլուած — ո եւ է մարդկային զգացում մը զգալու. ու միշտ կարծեց զգացած ըլլալ, որովհետեւ պէտք էր զգալ. մըտածեց որ պէտք էր տխրել ու կարծեց տխուր ըլլալ, ու ջանաց մեզ համոզել... որ տխուր էր երբ արդէն կը տարակուսէր ինքը:

Ծաղիկի լըրճուկ ուսումնասիրութիւնները սակայն չպարուած ու խարխուլ մտաւորականութեան մը կեղծ օծութեամբը փայլուն ու հնչական շատ հագուած, շատ զարդարուած լեզուի մը խաբուսիկ պչրանքովը շլացուցիչ՝ վերջնականապէս իրականացուցին Ա. Չօպանեանի անբմբհելի ժողովուրդականութիւնը: Ու անիկա, քաջալերուած ազէտ հասարակութեան մը ջնասկնալոյս սիրակսն պեճիկն, իր ընդ-

լայնելու, ընդհանրացնելու վիթխարի քուլիեովը, շարունակեց՝ քանի մը վաղնջական ընդհանուր գաղափարներու — գաղափարի խլեակներու, կտորակներու — շուրջը որոնք երբէ՛ք չէին մտած, տեղաւորուած իր ուղեղին մէջ եւ զորս իմացած, ընդհանրած էր միայն օտար մատենապիտներուն մէջ որոնց խղճամիտ ընթերցման իսկ ժամանակ չձգեց իր գրելու կատաղութիւնը՝ շարունակեց ան, միշտ աւելցող լըջութեամբ մը, հետտորական եւտօնկիտներու այդ վճռամուղ ու նողկալի գրականութիւնը:

Կը ցաւիմ որ Ծաղիկներու հաւաքածոյ մը չունիմ ձեռքիս տակ ձեղի հսկայ փուռ մը շինելու համար սապէս գիւլային խօսքերու. «Լոյսը որ առաջ Արեւելքէն կելլէր, որ վերջը Հարաւէն պրիմակուելով Արեւմուտքէն կլաւ, Լոյսը Հիւսիսէ՛ն է որ կը ծագի հիմա...» աւտով կը բացատրէր կարծեմ Իպսէնի ազդեցութիւնը: Կարդաղէ՛ք իր «Թոթովումներ»ը, իր իմաստակութեան ու գրական անպարկեշտութեան գերագոյն ծաղիկը, իմաստասիրական կեղծ խոռվումնքի այդ ամօթալի ու անդիմադրելի էջը. «Տիեզե՛րքը, — աղւոր ունո՛յն մը»: Ու շատեր բան մը հասկնալ կարծեցին այս հըսկայական անհեթեթութենէն ու կըմբռնեմ որ Վիէննայի Անմիտիար Հայրերը հիացումէ ըրած ըլլան տեղերնին ատիկա կարգալով:

* *

Ա՛ն է, միտ՛ կը, անբաղդատելին, հրաշագործը, Իմաստակութեան Վեհապե՛տը, ողջունե՛նք զինքը:

Իմաստեղծ, վիպասան, թատրերգակ, հրապարակագիր, իմաստասէր, բեմբասաց, քաղաքագէտ՝ անիկա ուղեց ամէն բան ըլլալ ու բան մը չեղաւ ու մնաց — «պարապ՝ պարապով շրջանակուած»... ու պարապով լեցուած:

Պիտի ուզէի երկար ու մանրաման ուսումնասիրութեամբ մը ներկայացնել հայ գրասէր հասարակութեան — եթէ ասանկ լան մը գոյութիւն ունի — Ա. Չօպանեանի տխուր պարագան, բայց այս արագ տողերուն մէջ չէի կրնար աւելի տարածուիլ, եթէ ատոր համար պէտք եղած համբերութեան ու «աշխատուած գրականութեան» կարող իսկ ըլլայի:

Յառաջիկային թերեւս
ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Թ Ո Ւ Ա Բ Ա Ն

Ա՞ս ալ արդեօք հին պատուելի տիպար մը, իր մասնագիտութեան տխուր ու յամառ հիւանդ մը, այնպէս՝ ինչպէս մոլիռանդ հայկարան մը՝ որ պիտի հարցաքննէր ձեզ հայերէն լեզուի մէջ, « — իմ անունս ի՞նչ է », ու յայլթական քթի ծայրով մը պիտի խնդար ձեր վրայ, երբ դուք փորձուէիք իր անունը տալու « — հայկարան Մարկոս պատուելի »: Արդեօք ա՞ս ալ, այս թուարանն ալ, առաջին հանդիպողին « — դուն թուարանութիւն գիտե՞ս », հարցնելէ ետք, եթէ պատասխանին մէջ խօսակիցն ուշանար, անոր երեսին լիւր քրքիջով մը « — ուրեմն բնա՛ւ բան չես գիտեր դուն » պիտի պոռար: Վերջապէս մէ՞կն այն դաժան մարդերէն, որոնք կեանքի տարօրինակ ճակատագրականութեամբ մը, սոսկալի մարդատեսներ ու արտակարգ արծաթապաշտներ եղան, իրենց պատմական շրջանի վերջին տարիներուն մէջ:

Բայց այս թուարանը՝ ուրիշ կարգի թուարան մը չլլալու է ապահովաբար: Երկար ու պատառատուն կապայ մը կունակը, ձախ ուսին վրայ յատկանշական ընդարձակ կարկտանով մը. խեղճուկրակ բոթու մը, կարմիր գօտիին վրայէն՝ մուլուխի կտոր մը փաթառած, ազոտ ու ձեւէ ելած էնթարի մը, թէև անոր մէկ օղակէն՝ ժամացոյցի պաճուճազարդ չլթայ մըն ալ կախուի, գունատ ֆէս մը՝ որ սեխածեւ գլուխը կը կաղապարէ կատարելապէս՝ իր ամբողջ ծաղրանկարային համեմատութիւններով, ու հինցած թուլումպածիներ, անշուշտ պատուելի մը տարազը չպիտի կրնային ըլլալ, որքան ալ վարժուած ըլլանք այնքան նուաստ ու այնքան հէգ երեւակայելու հին սերունդին այդ ուժով մէկ տիպարին ներքին ու արտաքին արդուզարդերը:

— Ուրեմն ինչ՞ու թուարան: Թերեւս արօրինակ մը այն աստն ու գուցէ նոր շնական մը, տիւոգիներէն հետաքրքրական վերջին մնացորդ մը, որ իր մտքին մաթեմատիքական գիրքէն՝ այնչտի ծիծաղելի ու խեղճ կը գտնէ մարդերու բոլոր պայմանագրական փետրաւորումները, մինչդեռ մերկ աշխարհք չի՞ գար

մարդը, բոլոր կենդանիներուն նման Գուցէ... բայց ի՞նչ գուցէ. ո՛չ ոտքերը բուպիկ, ոչ գլուխը բաց է, ոչ ալ երկինքին աստղերուն տակ, պայծառ արեւին, կամ տակառի մը չուքին՝ իր նմաններուն ունայնամտութեան եւ ծիծաղելիութեան վրայ խորհրդածելը տեսնող մը կայ:

Ընդհակառակը շատ անգամ հանդիպած եմ իրեն որ մօրուքն ածիլել ու թաւախտ պեխերը կտրել կուտայ, որպէս զի սուրճ կամ ապուր խմած ատեն, — ես իմ քովէս չարամբտութեամբ պիտի ըսէի՝ որպէս զի աղւոր կնիկ մը պագնել երեւակայած ատեն, — անփափկանկատ չգտնուին անոնք. ու որպէս զի, թերեւս, նաեւ, այդ մացառուտը մաքրուի, եւ իր յիսունական տարիներուն՝ դեռ հազի՛ւ երսունը հինգնոցի կերպարանք մը առնէ թուարանը:

« — Ուրեմն ի՞նչ է տա թուարանը » պիտի ըսէք, այս տխրախոսներէս ձանձրացած: Ես, իմ մասիս, կը խորհիմ թէ թուարան կատակ մըն է, ու ծաղրանկար մը, ծիծաղելի կողմերուն՝ հակառակօրէն անհամեմատ աճումովը շինուած: Այսպէս է որ քարապըջի կըսեն մէկու մը որ պեխին նշանը չունի, այլ որ մատները պերեւիշտներէն վար չառներ, ու թուարան՝ մէկու մը՝ որ մէկ մէկ ալ չի գիտեր քանի՛ կընէ, բայց ալճէպրայի անունով կը խօսի:

« — Ուրեմն ասո՞ր համար »: Բայց ինչո՞ւ չէ: Առաջարկեցէ՛ք իրեն ընկերութեան խնդիր մը, բաղադրեալ տոկոսի խնդիր մը, պնակ մը հեղիա կամ վառեակի ճուռի խնդիր մը, գրչի մէկ հարուածով, ակոսի կէս հարուածով, կը լուծէ, կը լուծէ՛ . . . :

— Ե՛է թուարան, ալճէպրա ալ գիտես ա՛: — Գիտեմ ամա՛ խուլանմիշ եղած չունիմ:

« Առաջ չէի գիտեր՝ հիմա մոռցած եմ » ի պէս բան մը. կամ, պահեստի ու սօնի զգեստ մը, զոր չուզեր գործածել, զոր բնա՛ւ գործածած չունի, ու պահած է սնտուկին ամէնէն անմատչելի ու անտեսանելի խորչերէն մէկին մէջ:

Թուարանին համար պիտի ըսէի մանուկ ու տհաս մնացած իմացականութիւն մը, որ չի ծերանար, որ բնա՛ւ չպիտի ծերանայ, ու տարիքին յառաջացումը պտիկ մըն ալ չպիտի աղդէ անոր վրայ: Բայց իր տարրական վիճա-

կին մէջ, այս իմացականութիւնն ալ իր հոգեբանութիւնը ունի, ու ո՛չ ամենէն պարզերէն: Ահա այսպէս է որ ես չեմ հասկնար թէ ինչէ՞ն կրնայ ըլլալ որ ամենէն բաց հեզնութեանէն բան հասկնալու անընդունակ մէկը՝ տօնքիչօթական շահատակութիւններու պատմութիւններ հիւսելէն ու զանոնք ինծի կլլեցնել ջանալէն հաճոյք զգայ:

Շատ անգամ, հետը իշնալու համար, հարցուցած եմ իրեն թէ ե՞րբ պիտի կարգուի:

— Օ՛հ, քիչ ատենէն, խըսմէթ ըլլայ նէ մէկ քանի ամիսէն, նշանը զրկած եմ արդէն, կըսէ:

Եւ իր նշանածը, որուն ու՛ր ըլլալը չի գիտեր, որուն երեսը բնա՛ւ տեսած չունի, իր Տիւլսինէն, աշխարհի ամենէ՛ն գեղեցիկ ու ամենէ՛ն հրաշալի աղջիկն է կըսէ: Եթէ նոյն իսկ հարցուէր իրեն թէ ո՞ւր տեսած ունէր զանի, առանց մտածելու պիտի պատասխանէր թէ ի՛նչ հարկ տեսնելու, քանի որ ինքը գիտէ թէ այնպէս է, քանի որ Սուրբ Հոգին կը վկայէ այնպէ՛ս:

Իր անցեալ կեանքէն, իր երտասարդութեան արկածներէն էջեր պատմել տուած եմ յաճախ: Հարիւրէն աւելի նարինջի պէս աղջիկներ անցած են ձեռքին տակէն, ոտքերը ինկած ու նուաղած են իր նայուածքին տակ, բայց ան՝ մատն իսկ չէ գպցուցած անոնց:

Սէրվանդէս կարգացած չէ, բայց կը զարմանամ թէ ու՛ր կը գտնէ իր պիտոյիս վէպերը, որոնց մէջ ինքը թափառաշրջիկ ասպետին երկորեակն է կարծես:

Պարագայ մը միայն անլուծելի մնացած է ինծի: Տօն-Քիչօթ, մեր օուան բոլոր Տօն-Քիչօթներուն պէս, անկեղծ էր ու կը հաւատար ինք իրեն, բայց չեմ գիտեր թէ Թուաբան ալ մինչեւ ո՞ր աստիճան տնկ զ՞ծ է իր սուտերուն ու Տիւլսինէներուն հետ: Հաճոյք կը զգայ արդեօք զիս խաբելով, թէ ուրիշները խաբելով խաբելով ինքզինքն ալ խաբած է այսօր: Ահա՛ ճշմարիտ հոգեբանական պարագայ մը, որուն վրայ ես ալ փորձուիմ թերեւս «երկար ու հմտալից» ուսումնասիրութիւն մը պատրաստելու որ Շայլօքինէն նուազ չգնահատուի ապահովաբար Անանիոսի մանաւանդ ուսասանայ ընթերցողներէն . . . :

Բայց ես պիտի ըսեմ որ Թուաբան կը


հաւտայ, վասնզի չի կրնար չհաւատալ: Այն բոլոր աղջիկներուն հետ, որոնց տունը ջուր կը կրէ,— աւա՛ղ, թերեւս հարկ չէր որ տակաւին ըսէի թէ Թուաբան ջրկիր մըն է արուեստով(․․), բայց սա՛ անգութ աղջիկները, — կեանք անցուցած է, անոնք իրեն համար էրած մրկած են, գաղտնի առաջարկութիւններ բերած ու սիրոյ խոստովանութիւններ են ըրած, ոտքն ալ ինկած են ու գրկած իսկ են զինքը, բայց ինք, իր խստակրօն ու մաքուր մարդու խմորին մէջ ու իր Տիւլսինէին տուած գերագոյն խոստումին մէջ անբասիր, ակամայ, այո՛ ակամայ մերժումներով պատասխանած է անոնց ամենուն:

Հիմա ճանչցա՞ք զինքը իր ուսումնականի կճեպին ներքեւ: Շատ անգամ սրճարանը նստած լրագիր կարգալը տեսեր եմ, ծուռիկ ու պզտոր ակնոց մը քթին վրայ, խորունկ ուշադրութիւնով: Բայց վայրկեանը մէյ մը իր ուսումնասպետ մարդու այս փառաբորումին վրայ հիացողներու ակնարկը մուրալո՞ւ համար է որ արդեօք՝ աչքը լրագրին վրայէն վերցնելով երբ շուրջը կը նայի, կասկա՛ծ միայն կը ծրնուցանէ թէ իրօք Թուաբան կարգալ չի գիտեր:

Ու իր վախճանին վրայ խորհիլ, յաճախ հաճոյք մը եւ, կը համարձակիմ ըսելու, պէտք մը եղած է ինծի համար: Այն բոլոր ենթադրութիւններուն մէջէն որոնք երեւակայութիւնս կը յաճախեն, ամենէն աւելի տրամաբանական կը գտնուի թէ Թուաբան օր մը անպատճառ իր կեանքի միակ խտէալին, ամուսնութեան պիտի հասնի: Բարեսէր զրացիներ պիտի կարգեն զինքը, այո՛, կը հաւատամ, ու հարա մը պիտի տան իրեն, թեւած քօղքած հարս մը, իր Տիւլսինէն անշուշտ, ժամ պիտի տանին զինքը անոր հետ, ու պիտի պսակեն ալ,— բայց առագաստի սենեակին մէջ, այդ աղւոր, ա՛յ ճիճի հարսը, այդ ջնաշխարհիկ հուրին, փայտէ խամաճիկ մը, անշունչ յանրփեն մը պիտի ելնէ՛:

Կատակ:
Խեղճ Թուաբան:

Կ Ա Ր Օ



Հ Ո Գ Ե Կ Ա Ն Վ Ի Ճ Ա Կ Ն Ե Ր

Զսպուած ու տխուր յուզումով մը թանձրամարմին ազգային մը կը բէր ինծի անցեալ օր բարեկամի մը տունը.

— Չէ, չեմ կրնար ձգել որ այդ թերթը տունս մտնէ, — ու աչքերը խոշորցած արհաւիրքով — ան ինչ նկարագրութիւն էր Շայշօֆինը. տէր ողորմեա՛, տէր ողորմեա...

Ու գլուխը կ'օրէր աստուածային տըխրութեամբ մը: Եւ հրէշային լրբութիւն — իր լայն ու տափակ դէմքը կը կարմրէր թաքուն ու պիղծ տրամաբանութիւնովը:

Խեղճին միամտօրէն կեղծաւոր ու գայթակղած անձոռնիութիւնը այնչափ ծիծաղաշարժ էր, որ ստիպուեցայ ոտքի ելլել, ու դուրսը խնդուքի անդիմադրելի պէտքս յագեցնել:

Աշունի հեշտուի դիշեր մըն էր, գիւթական վերջալոյսի մը ոսկեղօծ ու նուրբ բուրումներովը անուշահոտ: Մաքուր խաղաղութեան մը մէջ, ցօղոտ ու բիւրեղեայ, իրերը իրենց աղուոր ու հանդիսաւոր կեանքը կերակրէին, իրենց վեհութեանը մէջ անմատոյց՝ մարդկային տխմար խոռվքին: Վտիտ ու անտերեւ ծառերու մէջէն կը քալէի մտածելով ակամայ, այս քաղցր բաներուն մտերմութեանը մէջ, տխուր ու ապուշ գայթակղութեանը խոշոր վաճառականին:

Ու Անիկա եկաւ առջեւս իր ներքին կեանքին բոլոր մանրամասնութիւններովը:

Ճաշի ժամն է: սեղանին գլուխը նստած է քաղաքակրթուած, եւրոպականացած նահապետի բարեպաշտ փառքին մէջը: Ճիշտ գիմացի աթուր կը գրաւէ իր կինը, — ամբողջ հիացում —, իր կինը որուն աչքերուն երջանիկ յափշտակութեանը մէջ կաստուածանայ ինքը, երբ հայրական հեղինակութեան անձառ ու լուրջ շեշտով մը կը սկսի, բոլոր իր շառաւիղներուն խորին լռութեանը մէջ.

— Հայր մեր որ յերկինս ես...

Ու կը նայի անդրանիկ զաւկին որ կը փութայ շարունակել:

— Սուրբ եղիցի անուն քո...

Ա. աղջիկը — Եկեցիք արքայութիւն քո...

Կինը — Եղիցին կամք ո ո զէս յերկինս եւ ի վերայ...

Հայրը (քիչ մը գժգոհ) — Ձկ յ'... Գէորդ շարունակէ՛:

Գէորդ (Բ. մանչը) — Ի վերայ երկրի զհաց...

Բ. աղջիկը — Մեր հանապազորդ տուր մեզ այսօր...

Ու Հայր վերը կը դառնայ, կը դառնայ զմայլելի արագութեամբ մը, աղօթքի վալս մըն է, որ խորհրդաւոր, շրջանակաձեւ կը դառնայ, հետզհետէ աւելի փութկոտ, աւելի հրավառ, տարուած ապուրի շոգիներէն զէս ի աննիւթական ու լուսեղէն բարձունքներ...

Մինչեւ որ նահապետը քերովբէական երանութեան մը մէջ կ'աւարտէ զայն.

— Յաւիտեանա, յաւիտենից, ամէն՛:

* * *

Ճաշէն յետոյ հսկայ Աստուածաշունչը կուգայ ներս, ու անիկա իր գմբեթարդ կոնակին բոլոր արհաւիրքովը կանգուն, կը սկսի կարգալ, իր ընթերցողի, գրաբարագէտի կարողութիւններովը արբշխո, իւզոտ ու ռնգական ձայնով մը. ընթերցում որուն վերջերը ալ եւս նարօրինակ ճառագաթում մը կը կարմրցնէ, կը պարարտացնէ իր դէմքին միտերը:

Ձայնը մտերմութեան, խորհրդակցութեան շեշտեր կառնէ Ամենակալին հետ, ու իր առաքինութիւններուն բեռին տակ քրտնաթոր, աչքերը աստուածացումի արտայայտութիւն մը կը ստանան, ու սրբուհիի արցունքներ կը թրջեն իր կնոջ հիացական աչքերը...

Չեմ կրնար անշուշտ ենթադրել որ այս բարեպաշտ էակը Ս. Գիրքին մէջ ալ դատապարտելի էջեր գտնել համարձակի: Բայց երազս եղած է անգամ մը տեսնել զինքը երբ կարգայ, չհասկցողի նուիրական խանդավառումով մը, հրաշայի ու մեծափառ երգերը Սողոմոնի տարփանքներուն.

« Իր քերական հաւերոյրներովը քոյ հաւերարե զիս. վասն զի քո սերդ զինիտեւ անշի աղիկ ե. »

Ո՞վ Երուսաղեմի աղջիկները, ես սեւ եւլ բայց գեղեցիկ, Նեսարու վրաններուն պէս, Սողոմոնին վարագոյրներուն պէս:

Ին սիրական ինձի սառչի ծրարին պես է, գիշերը ինձ . . .

Ինչպես շուշանը փուշերուն մեջ՝ անանկ է ինձ սիրունիս աղջիկներուն մեջ:

Ինձ հոգույս սիրածը գիշերը . . .

Ինուն գեղեցիկ ես, ով ինձ սիրունիս, դուն գեղեցիկ ես.

Քու շրթունքների կարմիր դեղձանի պես են, խօսումս գեղեցիկ է. այսերդ շաշակիդ մեջեն նուռի կտրուներու կը նևանին:

Քու պարանոցդ փղոսկրե աշարակի պես է, ու երկու ուշերու պես են քու երկու սիկներիդ:

Սիրսս առիր, ո՛վ ինձ սիրունիս, սիրսս առիր քու մեկ նայումսդ ու պարանոցիդ մեկ փայտանանկակովը:

Գիկիկ առնի առնի է քու սերդ ու բոլոր խունկերեն առնի անուշահոտ ես դուն:

Ինձ սիրական սպիտակ ու կարմիր է. սուսը հագարի մեջ մեկ հասիկ է անի:

Անոր այտերը գառնած գոհարներու պես են:

Ձեռները ոսկի մասեր են. որովայնը բանուած փղոսկրե է, շափաղաներով ծածկուած:

Անոր սրունքները մարմար սիկներու պես են:

Անոր փակը փայլ է, ու ինքը բոլորովին ցանկալի. անս աշպես է ինձ սիրական, ո՛վ Երուսաղեմի աղջիկներ:

Ինչ գեղեցիկ են քու փայտերդ, ո՛վ իշխանի աղջիկ:

Քու հասակդ արևալեռի, ու սիկներիդ ողկոյզներու կը նևանին:

Երանի քե ինձ մօրս սիկներ ծծած եղբորս պես ըրայիր. երբ քեզ դուրսը գնեի, պիտի հաւբուրեի քեզ, ու զիս պիտի ջանարգեի:

Աստուածաշունչն են ասոնք, ու յաւիտենական գեղեցկութեամբ էջեր են ասոնք, մեր գրաբարին ծիրանագգեաց պերճութեանը մէջ առաւելագէս, անհունագէս վեհաշուք: Ու իմաստուններուն թագաւորն է որ իր սիրականին աղբորութենէն, ու անոր զգեստներուն անուշահոտութենէն գինովցած, սէրը կերգէ, սէրը՝ Մահէն աւելի ուժով, եւ որուն մաքուր ազնուականութեանը առջեւ անգոր պիտի մընան բոլոր կեղծաւորութիւնները:

* * *

Եղական զէպք մը յանկարծ միտքս եկաւ, ոամի՛կ, այո՛, բայց այնչափ նշանակալից, որ չեմ կրնար զանց ընել զայն հոս: Ասկէ ա՛միս մը առաջ երբ 5-6 բարեկամ նստած կը խօսէինք տեղ մը, օրուան լրագրին մէջ նիւթ եղած խնդրի մը վրայ, որ թէեւ ոչ սուրբ, բայց մարդկային տեսակէտով ցաւագին շահեկանութիւն մը ունէր, — բարեպաշտիկ վաճառականը որ քայլ մը անդին նստած էր, զայրոյթով դիտել տուաւ մեզի թէ՛ . . .

— Կարգուած մարդ կար մէջերնիս՝

Օ՛հ, անկէ ի վեր անխոստովանելի հետաքրքրութեաններ արթունցուցիր իմ հիւանդ ուղեղիս մէջ, ո՛վ Սրբութիւն, ո՛վ խպնոտ Կուսութիւն կարգուած մարդերու . . . (Գոնէ՛ զուլակ չունենայիր):

Միեւնոյն անհասանելի ու աստուածեղէն իմաստասիրութեամբը, բարեպաշտօն նահապետը թատրօն չերթար, գինի չխմեր, — ու խըմողներն ալ անգթօրէն ու յաղթականօրէն զժողք կը զրկէ, — հիւսքի չխմեր, շաւթնօղ ալ չխմեր, զարեջուր ալ չխմեր, լիմօնատ ալ չխմեր: Թատրօն չերթար, անբարոյական են խաղերը, անբարոյական է Շէյքսպիրը:

Բայց անցեալ տարի բանքօրեսայնի տարած էր իր զաւակները. գացած էր իր զաւակներուն հաղորդելու (կամ ինքն ալ զգալու, ո՛վ գիտէ, եւ ինչո՞ւ մեղադրել, ո՛վ չունի մարդկային տկարութիւններ) գացած էր իր զաւակներուն հաղորդելու հոյակապ մերկութիւններու, ճերմակ անուշ թեւերու, հիւթեղ ու վարդ լանջքերու տարփագին ու գինովցնող երանութիւնը: Ինքն բոլոր դիւթական երկնագեղութիւններուն, վարդերու, լոյսերու, աստղերու հարուստ փողփողումի մը մէջ, նուրբ շղարչներու ետին պաշտելիօրէն բաբախող աղջիկի առոյգ ու պտուղի պէս քաղցր միտքներն երջանիկ երգը ծծեցին լայնցած, խնդեցած սուրբ աչքեր . . . :

Ու հետեւեալ օրը, երբ զարմանք կը յայտնէի իրեն իր բանթօմայի երթալուն, անիկա Աւետարանիչի հանդիսաւոր մատի շարժումով մը ըսաւ ինձի.

— Բարոյական կայ բանթօմային մէջ: — . . .

* * *

Հանելուկ մը ուրեմն այս մարդը: Օ՛հ, ո՛չ: Եթէ ուսահայ ըլլայի, — ու մանաւանդ եթէ չվախնայի ծիծաղելի ըլլալէ, ինչպէս Մշակին Մ. Յովհաննիսեան ըսուած լղրճուկ թղթակիցը — պիտի ըսէի որ մարդը իր բարոյականը, իր բարոյականի խենդութիւնը, իր հաւատքը, ու իր զանգուածեղ կեղծիքը կը պարտի բնախօսս-հողերանական պատճառներու:

Տգեղութեան աստիճան մը կայ ուրկէ անդին մարդ անկարող կը զգայ ինքզինքը հանգուրթելու ու եւ է գեղեցկութեան, արգահատալից ըմբռնում մը ունիմ այն ցաւին զոր կը պահեն իրենց հոգիին էն ներքին ալքերուն մէջ այս բարեպաշտ ու անգեղեայ զոյգը: Ու եւ է խանդավառ երգ անուղղակի թշնամանք մըն է իրենց, ու քովէ քով նստած, իրենց շնորհազուրկ մտերմութեանը մէջ, առանց իրարու բան մը ըսելու, անհանգիստ զգացած են ինքզինքնին, ախար ու անհանգիստ — հատուածի մը առջեւ Գեղեցիկը փառաբանող: Անխօս ու տրտում, իրենց ներքին սրբութեան մէջէն բարձրացած է ըմբոստացումի ու ատելութեան ձայն մը բնութեան ու ճակատագրին դէմ:

Էականեր կան որ խղճի խայթի պէս բաներ կը զգան իրենց տգեղութեանը համար: Այդ թաքուն, այդ չխոստովանուած բայց հետապնդող անհանգստութիւնը կը թունաւորէ իրենց ոսկելիր Բէովզացիի աափակ երջանկութիւնը:

Օ՛, այո՛, գիւրաւ կըմբռնուի իրենց հակակրութիւնը զահաւորակին կնոջ, զոր չեն ալ հասկցեր: Այդ կինը որ ձեզի ներկայացուցած էի, անկարելի տենջանքներու ու ցաւերու մէջ նրբացած, ազնուականացած, խոէականացած, իր արհամարհանքին ու իր գոց աչքերուն անհուն սղուոր տրտմութեանը մէջ պաշտելի, իր երազի գոյն շրջազգեստին ու կապոյտ բնիկներուն մէջ պահած մամիի առտուածային ներգաշնակութիւններ, երեւոյթ մըն էր միայն մտքիս մէջ Արուեստը խորհրդանշանող, Արուեստը՝ դատաստպարտուած միալու միշտ ձեզի անհասկնալի, ու ձեր արհամարհանքովը՝ ուրախ:

Տ Ո Յ Լ Օ Ք

ՀԱՅ ՏԱՌԱՊՆԱՆԻՆ

Թ Ռ Է Ն Ի Ն Մ Է Ջ

Շոգեկառքը կը վազէր, կը վազէր, խուլ ու գիւային վազքով մը, մխրճուելով սեւ, անսահման, եղերական գիշերին մէջ. ու դեկտեմբերի մոլեգին անձրեւ մը շողեկառքին ետեւէն վաղելու, զայն հալածելու զգայութիւնը կուտար շարունակ ծեծելով մեր շունչերէն քրքրանած պատուհանները:

Քով քովի կծկտած, վրդովուած ու լուռ, գլուխնիս կոր կը մնայինք սպասումի անձկութեան մը մէջ որ բարութեան, ներողութեան ու անպատում արսմութեան շնորհք մը կը դրնէր մեր գէմքերուն վրայ:

Զիրար չէինք ճանչնար, բայց մեր հողիները ցաւագին եղբայրութիւններու գորովովը կը խօսէին իրարու, երբ մեր շրթունքները չէին բացուեր: Հեռուներէն, ամենքս մէյ մէկ կողմէ ինկած՝ այդ խեղճութեան վազուն հանգրուանին վրայ միացած էինք իրարու, ամենքս ալ դժբաղդ, ամենքս ալ արիւնոտած ու կիսամեռ Մօր մը անկարող ու փախստական զաւակները, ամենքս ալ Հայ: Ու երբէք չէի զգացած այն աստիճան բոլոր ընկճող տրտմութիւնը այդ բառին որ խղճի խայթի մը պէս կը կոտորար գլխուս մէջ:

* * *

Քուրջերու մէջ փաթտուած երախայ մը ծուկկերուն վրայ՝ երտասարգ կին մըն էր նստած դիմացս, գեղջուկ Հայուհիի թանձր տարազին մէջ պարտկելով աւերակը իր հալած, կմախացած մարմնին: Ծամբայ ելլալնէս ի վեր քանի մը անգամ, կարեկից հետաքրքրութեամբ մը, համարձակեր էի գլուխս վեր առնել նայելու համար անոր, իր փոստած գէմքին որուն ցուրտ տժգունութեանը վրայ կը բացուէին, հիւանդազին սեւեռումով մը, երկու խոշոր, սեւ, տենդոտ աչքեր ուր կը վառէր դեռ արիւնոտ արհաւիրքներու ցուրքը: Օ՛հ, այդ աչքերը, անոնց մայրական ու հրէշային նայուածքը... այդ աչքերուն, այդ նայուածքին մէջ էր միայն որ կապրէր ան, ախտագին կենսականութեամբ մը. երբ՝ պահ մը վերջը՝ զոցեց զա-

նոնք խոնջէնքի մրափի մը մէջ՝ ինծի թուեցաւ որ մեռած էր ալ, դիակ մըն էր ինկած ուսին վրայ իր էրկանը, խորտակուած, սպառած էակ մը ինքն ալ:

Խորունկ յուզումով մը կը դիտէի ցաւագին զոյգը. ո՞ւրկից կուգային, ի՞նչ ահաւոր աղէտքներ ջախջախած էին այդ դատապարտուած գոյութիւնները. ու այդ սգաւոր տարփանքի պատեղ՝ խողխողումներու ու մահւան հանդիւններու մէջ ծնած երախան, ի՞նչպէս յուսահատօրէն կը բռնէր զայն դիակ-մայրը իր ուժասպառ ծունկերուն վրայ . . . :

* * *

Ու չարաշուք տողանցնում մըն էր հիմա արհաւիրքներու զոր կը դիտէի պատուհանին սեւին մէջէն:

Դիակներ՝, գիակներ՝, գիակներ . . . : Ճնորատու արագութեամբ մը կը յաջորդէին անոնք իրարու պատուհանին այդ պատառ մը սեւէն: Մահուան ամբողջ դալկութեանը մէջ հանգարտ՝ անյարիր խաղաղութեան դէմքեր ուր ցաւատանջ կեանքերու յոգնութիւնը կը քնանար, երկինքն ի վեր սեւեռուած խենդեցնող նայուածքներ, վերջին անկարելի ճիգերու մէջ ձգտուած իրաններ, շրթունքներու տարօրինակ պրկումներ ուր ժպիտ մը, ահաւոր իր անշարժ յաւիտենականութեամբը, մոլեղին հեզութեան խնդուկ մը կուրուագծէր, ու նորէն ժպիտներ, անպատում անուշութեամբ ու բնաւ հեզնոտ ժպիտներ, ժպիտներ աղջկան ու տղաքներու, Յաւէն անաղարտ ժպիտներ լուսաւորելով անոնց երտասարդ մերկութիւնները, ժպիտներ ուր հազիւ պզտիկ, ներող, եղբայրական տրտունջ մը կը մնար:

Ու յանկարծ արհաւիրքներու վրայ բացուած սեւ պատուհանը սկսաւ կարմրիլ, արիւնի կարմրութեամբ մը որ բիւբրս կայրէր:

Ու շոգեկառքը կը վազէր, կը վազէր միշտ, խուլ ու դիւային վազքով մը, մխրճուելով սեւ, անսահման, եղբրական գիշերին մէջ:

* * *

Անակնկալ խլրտում մը շուրջս՝ գիւս սթափեցուց սեւեռումէս: Ետիս դառձայ: Անգիւն, նստարանին միւս ծայրէն, գաւառացի առոյգ երտասարդ մըն էր, շի՛հ համալի հուժ-

կու տիպար մը որ երգի կատրուանքներ կը մոլտար անորոշ, չկրնալով որոշում մը տալ շարունակելու անոնցմէ մէկը եւ որ յանկարծ այդ կատրուանքին մէջէն վանկէ մը կարծես բռնուած, գրաւուած, իր ամբողջ խանդովն ու լրջութեամբ, սկսաւ երգել

Սրտայոյզ վայրկեան մը եղաւ ատ: Անգիտակից մղումով մը ամենքն ալ արթնցան իրենց մրափէն, մինչեւ սա դիմացի կսկծալի զոյգը, ու ամենքն ալ, կարօտի եւ յոյսի վախկոտ խանդավառումով մը, մեղմօրէն, հեծկըլտանքի տկար, հիւանդ ձայներով, ընկերացան հուժկու երտասարդին, ու սիրուած անուշ երգն էր որ վակոնին խղզուկ մթնոլորտին մէջ կը լայննար, կերկարաձգուէր . . .

Մի շար մայրիկ, գիւ կը ասնին,
Հրացանով գիւ կը սարսնին,
Քո ստոք կրօնիկն գիւ կը հասնին,
Մայրի՛կ, մայրի՛կ, մայրի՛կ . . .

Գլուխս երկու ձեռքերուս մէջ առած՝ խեղդող յուզումով մը մտիկ կընէի պաշտելի երգը, երկիւղած լութեամբ մը կըզիացած ամենուն խլրտումին մէջ, չուզելով պզծիլ վայրի տրտմութիւնը այդ ձայներուն, իմ յոգնած քաղաքացիի ռամիկ ներդաշնակութեամբս: Ու յուզումս այնքան կուժովնար որ ալ մոռցած ամէն ամչկոտ վերապահում տղու մը պէս կը հեծկլտայի:

* * *

Ու յիշատակներ ալ գիւ կը սեւեռէին, կը գամէին երգին ունկնդրութեանը, երգին մէջ պիտի ըռէի: Անգութ հեզութեան գալաւորող սարսուռով մը յիշեցի ուրիշ շոգեկառք մը որ տարի մը առաջ, ամառուան լուսաւոր իրիկուն մը, Ետի-Գուլէէն Սիւրքէճի կը բերէր մեզի, դանդաղ ու յաղթական վազքով մը, եւ ուր ցնծութենէ ուռած սրտերով, ճուացինք, ոռնացինք կատաղօրէն ազատումի վսեմ երգը:

Չայնը հեյնց էրգրուալի Հայոց յեռնեռի . . .

Օ՛հ, 95-ի Սահմանադրութեան տարեդարձը. ամբողջ օրը կոկորդնիս պատուելու չափ պողոսցեր էինք, Եղիայէն սկսեալ քիչ մը ամենքս ալ ճտներ էինք գուրցեր, հայրենասիրական հետտրութեան հոսանքներ էինք թափեր ու իրիկուան զեռ բաւական կորով կը մնար մեր ուժասպառ թոքերուն մէջ այդ վերադարձի

Թռէնին յաղթական մուտքի վեհափառութիւն մը տալու համար

... Ու մահերգը միշտ կուլար քծվա, աւելի անուշ, տխուր ու անհունորէն յուզիչ:

Քաւիկն փշեց երան երան
Հայոց ֆայտը սեւաւորան...
Մայրի՛կ, մայրի՛կ, մայրի՛կ...

Ու սա կսկիծոտ յանկերգը որ կուգար ամէն տունին լալկան ու լացնող՝
Մայրիկին swarster ասերով ի,
Անո՛ւշ, անո՛ւշ, անուշ մայրի՛կ...

Մ՛հ, երգերը, աղուոր անդութ երգերը, անոնց չէ՞ որ կը պարտինք քիչ մը մեր բուրր տառապանքները ու մեր բոլոր հրճուանքները, անոնցմով չէ՞ որ սկսաւ ամէն բան, ու Հայրենասիրութիւնը մանաւանդ, երգերով միայն ծնած, երգերով սորվուած, երգերով արիւնտաած հայրենասիրութիւնը...:

Ու այս բոլորէն պատկեր մը կը մնայ հիմա, տարտամ, ստուերոտ պատկեր մը որ կը յաճախէ միաքա դառնութեան ու յոգնութեան վայրկեաններու: Թշուառութեան վազքն է ան դէպ ի անստոյգն ու անծանօթը, ու այդ պատկերը, — էն խորհրդանշանականը թերեւս Հայ Տառապանքին — կը շինեն իմ աչքիս — գիշերուան մութին մխուած այդ շոգեկառքը, անոր խուլ վազքին մէջ բանտուած երգը, ու բոլոր այդ ընկճուած կեանքերը, շղթայուած, նոյնացած, համազրացած այդ զոհուողի լացունող երգին մէջ:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Պ Զ Տ Ի Կ Ն Օ Թ Ե Ր

«ԱՆԱՀԻՏ»

Վե՛րջապէս... երեցաւ Ոսկեծղին, Անարատը, Բարութեանց բաշխիչը, մայրական Դիցանոյշը, — Ա. Զօպանեանի Անահիտը:

Այն խանդավառումին մէջ, որով ողջունուեցաւ ան, խմաստակներու լէգէոնէն ու հայերէն չգիտցող բոլոր վաճառականներէն, մեր շնորհաւորութիւնները ապահովաբար զանցանելի քանակ մը պիտի նկատուին: Բայց չենք ուզեր թերանալ մեր խղճամիտ պաշտօնակցի պարտականութիւններուն մէջ:

Անպատում յուզումով մը կը փութանք շնորհաւորել նախ համակրելի Վեհապետը, տարփօրէն, նախանձոտօրէն պահած ըլլալուն համար դեռ այն թանկագին յատկութիւնները որոնցմով կանգնեց «խմաստակութեան ու զբրական ֆիւլիսթրիի անմոռանալի, մղձաւանջային յիշատակարանը որ եղաւ Ծաղիկ», յատկութիւններ զորս միամտօրէն կը յուսայինք որ կորսնցուցած պիտի ըլլար երեք տարուան բարիգեան հայրենանուէր գործունէութենէ ետք: Բայց անիկա չէ փոխուած: Անահիտը պիտի գերազանցէ Ծաղիկը, առջի թիւէն դատելով:

Մեծանուն իմբազրապետը (գիտէք որ միակ հայ խմբագրապետն է, մեծ Ս ով. ուրիշ չենք ունեցած) եթէ սակայն հին բարեմասնութիւնները չէ կորսնցուցած, յաիշտակուած ու հիացկոտ գիտեցինք որ՝ նոր, ու այլապէս թանկագին, ու այլապէս ազնուական յատկութիւններ, գործի մարդու յատկութիւններ, իւրացուցած է: Ասով միայն կը բացատրուի բարբարոս արշաւանքը՝ Անահիտի խալտոտ ու վարդ կուսութիւններուն մէջ՝ ուսահայ անտանելի գրողներու խումբի մը, որոնք կը խոստանան — ու խօսքերնին կը պահեն անոնք — ոչ միայն անզուսպ ու մուկելին խնդուքի ժամեր տալ մեզ, այլ եւ կապահովեն մանաւանդ պատկառելի թիւ մը ուսահայ գեղարուեստասէր(°) ու սրամիտ(°) ընթերցողներու:

Բայց իր լայնածաւալ պարագին մէջ տարօրինակ անակնկալ մը պահած էր մեզի Անահիտ: Զարմանքով գտանք հոն յօդուած մը... Բաշալեանէն, շատ գեղեցիկ էջ մը, ինչպէս միայն ինքը կրնայ գրել, եւ որուն վրայ կը համարձակինք հրաւիրել մեծանուն իմբազրապետը, հակած ու քրտնաթոր՝ գիշերներ լուսցունել, հարցնելով ինքզինքին թէ ինչո՞ւ եւ թէ ի՞նչպէս աղուոր է անիկա... մինչեւ որ Զաւէն ու Յիլլա — Մ՛հ, պզտիկ, անամօթ անխմաստութիւնները — մէյ մէկ լեռնէ վար իջնալով տանին գինքը Յաւիկ տունը, բարերար ու խորունկ Յաւին տունը, ուր բնաւ չգնաց, որուն գիմացէն ալ չանցաւ...:

Այս անակնկալէն զատ, մնացածը բոլոր սպասածնիս էր, — միջակութիւններ, լղրճկութիւններ, ռամիկ բանագողութիւններ, ու այս բոլորին վրան, տակը, քովը, բոլորտիքը ու եզերքները՝ Վեհապետին անսպառ հետորու-

Թեան հեղեղները, — բացի ուսանալերէն որոնց հանգրիպումէն այդ «ծաղկաւէտ ճամբուն վրայ», ո՛վ հրէշու-թիւններ, զեռ չենք ըս-թափած:

Ամբողջութեանը մէջ սակայն Անահիս կիրականացնէ իտէալ թերթը, կրակին ան-կիւնը խանդավառութէն — ա՛հ որչափ համոզումով — յորանջող, ու «չհասկնալու տիրա-կան պէտքէն պալարող» մեր պուռժուաներուն:

Անահիս իրտեղը պիտի ունենայ մեր բո-լոր հայ սալօններուն(°) մէջ ուր շիֆ ճէնթը-մէններու որտէնկօթներուն հետ պիտի այնչափ զեղեցիօրէն ներդաշնակի իբրև գերազանցա-պէս ուստիագրուե՞ն թերթ մը:

* *

ՎՍԵՄԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

— Եզական մտքի վիճակ մը, Անահիսի ինքնագրապետներ, կրտսեր ինծի բարեկամներես մեկը անցեալ օր, առ տղան մի միայն վստել(°) բաներ կրտս կոր. կիկոպոսիներ իր բնական վի-ճակն է ալ: Փանկիչսային վստելութիւններու ա-նըսպառ աղբիւր մըն է ան. նայի ինչ գրեւ է.

«Մենք այդ կեներանագրին (ձօօօսային) մեջ կը տեսնենք նոյն իսկ Վիկտորիոս հոգին, ազ-նուական խորհրդաւորութեամբ շինուած (ա՛հ որ-չափ վստել, ու ո՛րչափ անեղօրէն անխնայ) այդ անպատշաճ կերպարանքին մեջէն ժայտելով գերա-գոյն այն ժայտը զոր Աստուած զսած չիւր (աւս-ւածարանական վստել) եւ զոր ինքը ստեղծեց»:

Հիացե՛ք ո՛վ ժողովուրդներ, հիացե՛ք:

* *

ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅԹ ՄԸ

— Բայց ի՞նչու դաշնակ չգարներ:

Զարուսցած միասնութեամբ մը այսպէս կրտսեր ինծի անցեալ օր արաւիտ սիկիւն մը, միակ լէյալին անբողջ Մանչեսթրի հայ գաղթականու-թեան մեջ:

— Բայց ի՞նչու դաշնակ չգարներ:

Ինչպէս կը գործակի՞ք անշուշտ՝ ինդիորը այն անբանաստեղծական ու անսանկի սաղաչա-փողին վրայ եր որ կը կոչուի Վ. Սիւանեան:

— Գլխուցալի այս Աստուածը իրաւի պաշտել ըն-դունած կը բռնի գրականութեան թշնամի ոգիէ մը, ոսանաւոր էլիւ-քիւպէ ընկեր: Նոր Կեանքը

անոր կը պարտի սաղաչակի խոշոր բաժին մը: Բայց Անահիսը (Ոսկեծղին, բարեաց բաշխիչը) պիտի չտանէր անոր օգնութեան, բաշխելու համար մեզ իր բանէր անհամարժեք ու խորունկ պա-րասլը: Մեծանուն ինքնագրապետը ըստիւրէն կը բարեւ աւոր: Եւ արդէն վրէժը կտանէ ան, դը-ժոխային հեղեղութեամբ մը հայ Լրբունդ տը Լիլը կոչելով ինչո՞ւ Սիւանեանը:

— Բայց ի՞նչու դաշնակ չը գարներ:

ՇԱՅԼՕՔ

ԲՕԼԵՐԳ

Թարմ հողին
Բրակի կանանց կողին
Խոնառ բարիչն՝ անկոփին
Բիւր երազներուն՝
Գիւնով փերթոյին:

Տխուր հոգերն անցեալին,
Մաքուր երեկին, պզտիկ անցեալին
Մասալ փերթոյին՝
Ծաղկաժայռի սպիտակին՝
Շունչէն կը հաշի՛ն:

Ի՛րիկնաւորսին,
Սեւին վրայ վարդագոյն՝
Աղջաւնողին ու մտքին,
Ցաւոս միտքին մեջ հեզ բանաստեղծին,
Վերջարշախ ուլեծին
Մսածուներ, իբրև թիթոսայ
Պար մ՛տանանքին՝ կը յածի՛ն:

ՇԱՅԼԵ

* * * ԱՄԷՆ ԱՆՈՒՔ ՈՐ ՉԵՆ ՈՒՉԵՐ
ԶՐԻ ԿԱՐԴԱԼ ՄԵՐ ԹԵՐԹԸ ԹՈՂ ՀԱՃԻՆ ՓՈՒ-
ԹՍԼ ՄԵՉԻ ՂՐԿԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԲԱԺՆԵԿԻՆՆԵՐԸ:

ՎԱՂՈՒԱՆ ԶԱՅՆԸ կը հրատարակուի ա-
մէն ամսոյ 15 ին: Բաժանորդագրինն է ամեց
տեղի համար տարեկան 5 չիլին կանխիկ:
Նամակ կամ բաժնեգրին ղրկել առ՝

S. BARTEVIAN,
21, BRIGHTON ST., OXFORD RD.,
(England.) MANCHESTER.